ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

ԿՈՉ Ի ՆՊԱՍՏ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Ֆրանսահայ Երիտասարդական Միության Կենտրոնական Վարչությունը կոչ կուղղե ֆրանսահայ երիտասարդներուն որ զանգվածորեն ստորագրեն և ստորագրել տան Խաղաղության կողմնակիցներու Ստոկհոլմի կոչը։

Հայ երիտասարդը, որ իր գաղղիացի եղբայրներուն հետ չուզեր իր հարազատներուն մահը, որ խղճի դեմ կգտնե ամեն մարդկանց զանգվածային ոչնչացումը, պետք է որ իր գործոն մասնակցությունը բերե հյուլեական ռումբը արգիլելու համար մղվող պայքարին։

Թող ամեն քաղաքներու, ավարձաններու, գյուղերու մեջ, հայ երիտասարդները առանց որևէ քաղաքական կարծիքի կամ դավանանքի խտրության, հավաքվին, կազմեն հանձնախմբեր և դնեն դուռ այցելությամբ ստորագրել տան Ստոկհոլմի կոչը։

Ապրեն Ֆրանսայի, ինչպես նաև ուրիշ երկրներու մեջ կարևոր աշխատանքներ տարված են այդ ուղղությամբ։

Միջազգային Կարմիր Խաչը, պաշտոնական զեկույցով կդատապարտե հյուլեական ռումբի գործածումը։

Սովետական Հայաստանի մեջ ականավոր դեմքեր, ինչպիսին են՝ Վեհափառ Կաթողիկոս Գեորգ Զ., Ա. Իսահակյան, Ա. Խաչատրյան, Վ. Համբարձումյան, կհրավիրեն Սփյուռքի համայն հայությունը զանգվածորեն ստորագրելու Ստոկհոլմի կոչը։

Հայ երիտասարդները, ըլլան անոնք Ֆրանսահայ Երիտասարդական Միության անդամ կամ անոր շարքերեն դուրս, պետք է առանց հապաղման լծվին աշխատանքի, որպեսզի մարդկությունը զերծ մնա իր պատմության մեջ չտեսնված այս ահավոր պատուհասեն։

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԺԱՖ) ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Փարիզ, 17 մայիս 1950

ՀՈՒՆԳԱՐԻՈ ՀԱՅԵՐԸ ԵՎ ՍՏՈԿՀՈԼՄԻ ԿՈՉԸ

Ռումանիո Հայկական Դեմոկրատ Կոմիտեի օրգան «Սևան» շաբաթաթերթեն կտեղեկանանք, որ Հունգարահայ գաղութը ամբողջովին կհարի Ստոկհոլմի խաղաղության կոչին։

Ահա այն նամակը, զոր գրած են հեշյալ թերթին Հունգարիո հայ համայնքին ներկայացուցիչները.

«Այժմ մենք, տեղվույս գաղթական հայերս, միանալով մեր հունգարահայ եղբայրներուն, առանց դավանանքի, դասակարգի և կուսակցական համոզմունքի խտրության, մի սիրտ և մի հոգի, ձայն կբարձրացնենք ի նպաստ խաղաղության, որպեսզի մեր ժողովրդի տասնյակ տարիներու տառապանքները չկրկնվին։ **Խաղաղություն կուզենք, ո՛չ թե պատերազմ։**

«Ուստի, կխնդրենք բարի լինել ձեր պատվական թերթին միջոցով մեզի թարգման հանդիսանալ, ուր որ անկ է»։

(Ստորագրել են Հունգարիո Հայ Միության քարտուղար Հ. Ս. ՌՇՏՈՒՆԻՆ և Հունգարիո Հայ Կաթոլիկ ժողովրդապետը)։